



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

14634

G. Impe

1883

277

ՄՈՐ ՄԸ ԴԻՏԱՀԱՌՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ՈՐՈՇՈՒՄԸ

ՈՐԴԻՈՑ ԿՐԹՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱՐ

معارف نظارت جلیله سنت رحمتیله طبع او لشدر

Կ. ՊՈՂԻՄ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

370.1

5-92

1883

2000

2010

370.1

Ա- 92

ԽՍՀՄ ԳԱԱ ՊՐԵՍՏԻ ՊՈ ՊՈՒ

ԵՎԱԼԵՐՈՅ 43

ԺԱՄ ՊՐԵՍՏԻ ՑՈՒՅՈՒ

ՊԱՍՏ



37473-67

ՄՈՐ ՄԸ ԳԻՏԱԿՈՐՈՒԹԻՒՆԸ ԵԿ
ՈՐՈՇՈՒՄԸ ԻԿՐ ՈՐԴԻՈՅ ԿՐԹՈՒԹԵՍՆ
ՀԱՄԱՐ

1. Տունս կառավարելու և զաւկներս
կրթելու հիմ պիտի բռնեմ Սուրբ գիրքը :
Ես եւ զաւկներս միշտ աչաց առջեւ պի-
տի ունենանք Սուրբ գիրքին հրամանները
եւ օրինակները :

2. Պիտի ջանամ ըլլում այնպիսի , որ-
պիսի կ'ուզեմ որ ըլլան զաւկներս : Որ-
պիսի է մայրը , նոյնպիսի է նաեւ աղջի-
կը : Մարդ իւր մօրը բնութիւնը կ'առնու :

3. Սիրով եւ քաղցրութեամբ պիտի
վարուիմ զաւկներուս հետ , բայց ոչ թու-
լութեամբ եւ անհաստատութեամբ :

4. Իմ անձիս պիտի յաղթեմ , որ-
պէս զի հնազանդութեան վարժեցունեմ
զաւկներս :

5. Միշտ պիտի աղօթեմ եւ ջանամ որ
զաւկներուս գաստիարակութեան համար
ձեռք առնուած միջոցներ բաւական ըլլան
անոնց սէրը , մեծարանքը եւ հնազանդու-
թիւնը ձգել առ իս :

6. Պիտի չմոռնամ որ զաւկներուս երէցը
խնամով կրթելու եմ , վասն զի երիցա-

5/553-Ա.Հ.

գոյնք միշտ մեծ ապդեցութիւն ունին
կրտսերագունից վրայ :

7. Պիտի չնուռնամ նաեւ որ տղան ման-
կոթենէ սովորեցնելու եմ հնազանդելու ,
քանզի , եթէ տղոյ մը մինչեւ իւր հինգ
տարին հնազանդ կ'ըլլայ մօրը , այնոււհե-
տեւ նեղութիւն չոտը անոր . իսկ եթէ
մինչեւ տասը տարին չսորվիր հնազանդիլ
յոյս չկայ թէ այնուհետեւ պիտի սորվի :

8. Պիտի ջանամ որ զաւկներս յօժարու-
թեամբ եւ արտգ հնազանդելու կրթեմ ,
եւ հարկ պիտի չհամարիմ միշտ ցուցնել ա-
նոնց թէ ինչ պատճառաւ հնազանդութիւն
կը պահանջեմ անոնցմէ : Թոյլ պիտի չոտմ
որ տղաքս դժկամակին , տրանջեն , հակա-
ռակին կամ գանդաղին հրամաններս կա-
տարելու : Պիտի սովորեցունեմ զանոնք
ըսելու , «Մայրս գիտէ » :

9. Պիտի չհրամայեմ բան մը զոր կը
տեսնեմ թէ կարող պիտի ըըլլամ կատա-
րել տալ : Շատ եւ աւելորդ կանոններ
պիտի չդնեմ , բայց ինչ որ կը դնեմ՝ պի-
տի ջանամ գործադրել տալ :

10. Պիտի զգուշանամ սպառնալէ , բայց
պիտի սորվեցնեմ կանխաւ թէ անպատիժ
չեմ թողուր անհնազանդութիւնը :

11. Այս եւ Ոչ լսել բերնէս բաւական
համարելու են :

12. Որոշմանս վրայ հաստատ պիտի կե-
նամ միշտ , բայց երբ հարկ ըլլայ որոշումս
փոխել պատճառը պիտի իմացունեմ :

13. Բարկութեամբ կամ ըստ հանցս
յանդիմանութիւն եւ պատիժ պիտի չտամ
Սաստիւ պիտի չյանդիմանեմ այնպիսի
բանի մը համար զոր ուրիշ անգամներ
թոյլ տուած եմ :

14. Բայտ պատահման կամ սխալբամբ
գործուած յանցանաց համար պիտի չբար-
կանամ . չարութեամբ եւ մանտաւանդ
դիտմամբ գործուած յանցանաց համար
միայն պիտի պատժեմ խոտիւ :

15. Որչափ հնար է , պիտի ջանամ պատ-
ժել մեղմով տաւանց բարկութեան :

16. Բարկութեան ատեն պիտի չզարնեմ
երբէք :

17. Ծլուն գլխուն զարնելէ մանտաւանդ
պիտի զգուշանամ :

18. Զաւկներուս գործերուն մեղանչտ-
կանութիւնը եւ վնասակարութիւնը խնա-
մուլ պիտի ցուցնեմ անոնց , եւ զանոնք
պատժելէ առաջ աղօթք պիտի ընեմ :

19. Եթէ հնար է , միշտ ի ծածուկ
պիտի պատժեմ :

20. Պիտի նայիմ որ սուս չխօսին առ
երկիւղի պատժոյ , եւ մասնաւոր գութ

սիտի ցուցնեմ անոնց որ անձամբ կը խոս-
տավանին իրենց յանցանքը :

21. Արշափ հնար է, գործ եւ զրօսանք
սիտի գտնեմ տննց, որպէս զի անդսրծ
մնալով փորձութեան նշաւակ չըլլան :

22. Երբ զաւկներս կը ջանան բարի ըլ-
լաւ, քաջալերական խօսքերով զանոնք
սիտի գողեմ, եւ պիտի յորդսրեմ զաւկը-
ներս աւելի բարի ըլլալու :

23. Զաւկներուս պիտի սորվեցնեմ մաք-
րութիւն սիրել :

24. Զաւկներուս պիտի սորվեցնեմ զգու-
շանալ անձնասիրութենէ եւ օդնել այլոց :
Պիտի ջանամ տպաւորել անոնց մտքին
վրայ թէ այլոց օդնել ոչ միայն պարտք է,
այլ եւ օրհնեալ արտօնութիւն է :

25. Զաւկներս յանցաւոր պիտի չբռնեմ
առանց ապացուցի :

26. Զանոնք որեւիցէ կերպով պիտի
չխարեմ, եւ միշտ ճշմարտութեամբ պիտի
վարուիմ անոնց հետ :

27. Գործով պիտի ցուցնեմ զաւկնե-
րուս թէ անոնց լաւագոյն բարեկամն եմ
ես :

28. Պիտի աշխատիմ որ տունս ըլլայ
զաւակացս համար ամենէն երջանիկ եւ
հաճելի տեղը :

29. Պիտի սորվեցնեմ զաւակացս թէ
հոգին պատուական եւ ազնուագոյն է
քան զմարմին, եւ երկինք քան զերկիր :

30. Սուրբ օրն ուրախութեան եւ չնոր-
հակալութեան օր պիտի համարիմ, եւ
յատուկ միջոցներ պիտի գործածեմ որ
զաւկներս սուրբ պահեն կիրակին :

31. Պիտի տշխատիմ եւ տղօթեմ որ
զաւկներս իրենց փոքր հասակէն Քրիստո-
սի հաւատարիմ ծառաներ ըլլան, եւ յու-
սով պիտի սպասեմ աղօթքիս պատասխա-
նին :

32. Միշտ պիտի յիշեմ թէ Տէրոջը պա-
տասխանատու եմ սա մասին թէ ինչպէս և
կը կատարեմ իմ պարագերս առ սրդիս իմ:

ԱՅ, պայման Կամաց քաղաքական աշխարհի մեջ
և մարտածության մեջ անգամ առաջ առաջ առաջ առաջ
է պատճեն մաս պահանջ է առ անգամ առ
առաջ և առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ

2013

«Ազգային գրադարան»



17634

NL0051409

